Մ. ԱՅՐ ԱԹՈՌ

Փետրվարի 28-ին Ս. Վարդանանց զորավարաց և 1036 վկայից տոնի օրը Մայր Տաճարում ս. պատարագ մատուցվեց և հոգեհանգիստ կատարվեց ազգի և հավատի համար նահատակվածների հիշատակին։

Արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Օշական գյուղի եկեղեցու (որտեղ գտնըվում է Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը) համար քահանա ձեռնադրվեց Վազգեն Ամատունին։

***

Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի Առաջնորդ Տ. Սուրեն եպիսկոպոսը, արձակվելով իր պաշտոնից, նշանակվեց Ռումինիայի թեմի Առաջնորդ և մեկնեց իր պաշտոնատեղին։ Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդական փոխանորդ նշանակվեց Արմավիր քաղաքի ավագ քահանա Տ. Վահան Թավարբեկյանը։

***

Թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Բաքվի և Թուրքեստանի թեմի Առաջնորդ Տ. Ներսես եպիսկոպոսը։

***

Թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեցին Վրաստանի Հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սահակ ավագ քահանա Սահակյանը և թեմական խորհրդի անդամ Փ. Մելիք-Կարապետյանը։

***

Էջմիածնի նորաբաց Հոգևոր ճեմարանի աշխատանքները ընթանում են նորմալ։ Ուսուցչական կազմը բաղկացած է կարող ուժերից, իսկ ուսանողությունն աչքի է ընկնում իր լավ վարք ու բարքով և ժրաջանությամբ։ Մեծագործ Գևորգ Զ-ի հիմնած այս դարբնոցում պատրաստվում են մեր ապագա շնորհալի հոգևորականները։ Վեհափառ Հայրապետը անձամբ հսկում է ուսանողության առաջադիմության, սննդի, հագուստեղենի և այլ կենցաղային պայմանների բարելավման գործին։

***

Վեհափառ Հայրապետի ամենամեծ հոգացողության առարկան է հանդիսանում Մայր Տաճարի վերանորոգման խնդիրը։ Այդ ուղղությամբ խորհրդակցություններ են տեղի ունենում Հայաստանի ականավոր ճարտարապետների ու արվեստագետների մասնակցությամբ։

***

Հայաստանի քաղաքներից, շրջաններից, ինչպես նաև Հայաստանից դուրս գտնվող այլ վայրերից բազմաթիվ էքսկուրսանտներ են գալիս Մայր Աթոռ, պատմական վանքի, թանգարանի և այլ տեսարժան տեղերի հետ ծանոթանալու համար։ Այցելուների մեջ կան նաև Կարմիր Բանակի հայ ու օտարազգի բարձրաստիճան շատ զինվորականներ, ինչպես նաև օտարերկրացիներ։

Թանգարանի և Մայր Տաճարի մասին բացատրություններ են տալիս Սահակ և Եղիշե վարդապետները։